




«ԹՈՂ ՏՈՒՔԻ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ.» ԳՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԻԶ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՅՈՒՆԻՍ 1, 1897


ԹԻՒ 7



ՔԱՐՈՉՈՒԹԻՒՆ ՆՈՐՎԵԿԱՆ ԱԳԱՐԱԿԻ ՇԷՆՔԻ ՄԸ ՄԷՁ

Այս պատկերը կը ներկայացնէ աւետարանիչ մը որ այս դարուն սկիզբները Աւետարանը կը քարոզէ Նորվեկիոյ մէջ խումբ մը գրացիներու, որոնք իրիկուան դէմ ազարակի շէնքի մը մէջ ժողովուած են: Եկեղեցական պատմութեան տեղեակ եղողներուն կը յիշեցնէ առաջին երեք դարերուն մէջ ընդհանրացած բան մը, նաև կը յիշեցնէ շատերուն որ այս թերթը կը կարգան՝ այս երկրին

մէջ տեսնուած տեսարաններ: Գրիտոսի Աւետարանը, անոր փրկութեան բարի լուրը, պէտք է որ հրատարակուի ամէն տեղ: Եւ ամէն տեղ անոնք որ զանիկա կ'ընդունին անկեղծ հաւատքով, իրենց անձնական փորձառութեամբ ճշմարտացէս կը դտնեն կենաց հոց, անոր քարոզութիւնը թէ՛ լսեն եկեղեցիի մէջ, թէ՛ լսեն տան մէջ:



«ԱՆՄԻՋԱՊԷՍ ԼՈՒՐ ԿՈՒ ՏԱՄ»  
(Աւելի քան մը)

Ճամանակաւ մեծ թագաւոր մը իր

հպատակներուն հրամայեց որ իրեն համար կտաւ և կերպասներ գործեն: Թագաւորը ինք անոնց տուաւ մետաքսը, բուրդը և օրինակները, և կը սպասէր որ իր ժողովուրդը ժրջան շուրթեամբ աշխատէին: Եւ սակայն ինք շատ համբերող և ներող էր, և ըսած էր անոնց թէ ե՛րբ որ դժուարութեան հանդիպին իրեն լուր տան, և ինք պիտի օգնէ անոնց: Նաև ըսած էր որ երբեք չլիանան թէ զինք կը ձանձրացնեն, այլ օգնութիւն և հրահանգ խնդրեն:


Աշխատող բազմաթիւ մարդոց և կիններուն մէջ պզտիկ աղջիկ մը կար։ Ասոր ալ գործ տուած էր թագաւորը անոր պզտիկութիւնը արդեւ չսեպեւրով։ Փոքրիկ աղջիկը շատ անգամ մինակ կ'աշխատէր զուարթութեամբ և համբերութեամբ։ Օր մը, երբ մարդիկը և կիները մեծ նեղութիւն կը գրային իրենց անյաջողութիւններուն և ըրած սխալներուն համար — վասն զի մետաքսները կը կնճռտէին և զործուած կտանները և կերպասները արուած օրինակին պէս չէին — փոքրիկ աղջկան եկան և ըսին. «Բռէ մեզի, ինչէն է որ դուն այսչափ ուրախ ես գործիդ մէջ. մենք միշտ դժուարութիւններու մէջ ենք։» «Ուրեմն ինչո՞ւ համար թագաւորին լուր չէք

տամարտ մը եղաւ որ մեծ աղբեցութիւն ունեցաւ Գաղղիոյ և Անգլիոյ ըռնած դիրքերու մասին Հիւսիսային Ամերիկայի մէջ, վասն զի այդ ժամանակէն ի վեր առաջնութիւնը Անկլո-Սաքսոն ցեղն ստացաւ։ Այս քաղաքը այն ատեն ամուր քաղաք մըն էր, և մինչև հիմա ալ այնպէս է։

Բայց հիմա, ոչ թէ պատերազմը, այլ՝ ուսումը և արուեստները կը ծաղկին այս քաղաքին մէջ։ Հոն կայ մեծ համալսարան մը, փառաւոր և կեղեցիներ, մասնագարաններ և հանրային ուրիշ շէնքեր։ Բնակութեան համար հաճելի քաղաք մըն է։ Շինուած է Սր. Ղարնետիսոս մեծ գետին վրայ, և չրջապատուած է գեղեցիկ տեսարաններով։ Քուիպէրի ձմեռները խիստ

ըր բացած և կտոր մը իր ձեռքը բռնած։ Մայրը անոր պուռաւու վրայ էր, բայց տեսնելով որ փոքրիկը սպասեցքիչ մը իբր թէ մտածելով բանի մը վրայ, կեցաւ հասկնալու համար թէ ինչ պիտի ընէր աղջիկը։ Մեծ եղաւ մօրը երջանկութիւնը երբ տեսաւ որ փոքրիկ աղջիկը տեղը դրաւ շաքարեղէնները, և դարակէն վար աթոռի մը վրայ և աթոռէն վար գետինը իջնելով վեր նայեցաւ զուարթ ժպիտով, և իր ոտքը գետինը զարնելով ըսաւ, «Ուրախ եմ որ չկերայ։»

Մեծ յաղթութիւն էր այդ։ Ո՛հ, աղաք, ամէն մէկը Աստուծոյ վրայ մտածեցէք ամէն անգամ որ մեղանչելու կը փորձուիք, և դուք ալ այսպիսի յաղթութիւններ պիտի ընէք։



Բայց Սատանային դէմ կուռելու ամենէն աղէկ ժամանակն է այն՝ երբ առաջին անգամ չար խորհուրդ մը կը թելադրէ։ Այս փոքրիկ աղջկան համար շատ վրտանաւոր էր այսչափ մտտեղալ չարութիւն գործելու։ Աւելի աղէկ պիտի ըլլար եթէ փորձութեան իր առջևը ելած ատեն չիտակ դուրս վաղէր սենեակէն իր սրտին մէջ ըսելով, «Ո՛չ, ոչ» և երթար իր խաղերուն, որպէս զի ուրիշ բանի մը վրայ խորհէր։ Աստուածաշունչին ամենէն օգտակար աղօթքներէն մէկը կը գտնուի ճժԹ. Սաղմոսին 37 համարին մէջ. «Դեռ դարձուր իմ աչքերրս, որ նստաի բան չտեսնեն։»

Միշտ ըրէք այս աղօթքը երբ չար խորհուրդ մը կը թելադրուի ձեր տեսած կամ մտածած բաներէն, և Սատանան կարող պիտի չըլլայ ձեզի բռնի մեղանչել տալ։

տար. ինքն ըսաւ թէ լուր տանք իրեն,» պատասխանեց փոքրիկը. «Մենք լուր կու տանք իրիկուն և առաւօտ։» «Ո՛հ,» ըսաւ աղջիկը, «բայց ես երբ փոքրիկ դժուարութիւն մը ունենամ, մինչև իրիկուն չեմ սպասեր, անմիջապէս լուր կու տամ և օգնութիւն կը խնդրեմ։»

ՔՈՒՒՊԵՐ

Քիչ քաղաքներ կան Ամերիկայի մէջ որոնք կրնան հին քաղաք կոչուիլ։ Բայց Քուիպէք ամենէն հինն է, և ասկէ 150 տարի առաջ Ամերիկայի ամենէն համբաւաւոր քաղաքներէն մէկն էր։ Այն բարձր սեղիւն վրայ որ Արրահամու Բարձունք կը կոչուի, և ուրիշ առնուած է այս պատկերը, 1759 Նոյեմբերին Գաղղիացի և Անգլիացի զինուորներուն մէջտեղ մեծ ճակատ

են և երկայն, շատ ցուրտ և սառնամանիք կ'ըլլայ հոն, բայց ամառները համայն են։

ՓՈՒՔՐԻԿ ԱՂՋԿԱՆ ՄԸ ՏԱՐԱԾ ՅԱՂԹՈՒԹԻՒՆԸ

Մայր մը իր փոքրիկ աղջկան համար բերաւ ծրար մը շաքարեղէն, և անոր տալէ ետքը այնչափ որչափ որ աղէկ էր մէկ անգամ ուտելու համար, ծրարը պահանջեց վերի դարակին մէջ դրաւ և ըսաւ թէ այդ օրուան մէջ ատկէ աւելի ուտելու չէ։ Մայրը տան վերի յարկը ելաւ և ժամանակ մը ետքը նորէն վար իջնելով եկաւ բաց դրան առջև սենեակին ուր շաքարեղէնները դրած էր։ Իւ ինչ տեսաւ կը կարծէք։ Տեսաւ իր փոքրիկ աղջիկը որ կայնած էր պահանջեցին դարակին մէջ, շաքարեղէնի ծրա-


ԲԱՆՏԱՐԿԵԱԼԻ ՄԸ ԽՐԱՏԸ  
Սինկ Սինկ անուն բանտին մէջ, որ Ամերիկայի ամենէն մեծ բանտերէն մէկն է, կայ ծերունի մարդ մը որ հոն բանտարկուած է դրեթէ քառօրդ դարէ ի վեր։ Մաղերը ճերմակած են, և իր հասակը որ ատենով նոճիի մը պէս ուղիղ էր, ծուած է տարիքէն և յոգնութենէն։ Ժամանակաւ իր բնիկ քաղաքին երիտասարդաց զուարթ խումբին պեսն էր, և խումբին սիրելի և նախանձելի մէկ անդամը։ Իր յաջողութեան ամենէն բարձր կատարը գտնուած ատենը ինկաւ, այսինքն մեծկակ գուամար մը գողցաւ, և ուստի բանտարկութեան դատապարտուեցաւ։ Հետագան խօ-

ասած է ինքը այցելուի մը:

«Պատիժիս պայմանաժամը շուտով պիտի լրանայ և ազատ պիտի արձակուիմ: Եւ սակայն ապրելու քիչ և տարիներ ունիմ, վասն զի ծերացած եմ հիմա. բայց որոշած եմ այդ տարիներն անցընել պատանիները և երիտասարդները յորդորելով և խրատելով որ մեղանշական ճամբաներէ գգուչանան: Ամէն բանէ աւելի պիտի յորդորեմ զանոնք որ իրենց խիղճը փափուկ և զգայուն պահեն. վասն զի եթէ անգամ մը կարծրանայ և խանձուի, ա՛լ կորսուած են: Չեմ կարծեր թէ ես հոս պիտի ըլլայի այսօր, եթէ ականջ դնէի խղճիս ձայնին որ կը խօսէր ինձի տղայութեանն ատենը: Երբ առաջին ոճիրս գործեցի, տասներկու տարեկան էի: Պատիկ եղբորս ստակի փոքրիկ տուփը կտարեցի, և գողցայ մէջը պարունակուածները— միայն քանի մը դահեկան: Բայց այդ գործս խտացուց զիս, այնպէս որ մեղք գործելը հետզհետէ աւելի դիւրին կու գար այնուհետէ: Եթէ ականջ դնէի խղճիս ձայնին, որ խօսեցաւ ինձի երբ փորձուեցայ բանալ այն թիթեղեայ փոքրիկ տուփը, և յաղթէի փորձութեան, կարծեմ ես ոճրագործ մը պիտի չըլլայի և տասը տասներկու ընտանիքներ աղքատութեան և խեղճութեան մէջ պիտի չիյնային, ես ալ հոս պիտի չգրուէի որ իմ կեանքս անցընէի նախատինքի և յողնութեան մէջ: Հարցուցէք այս շէնքին մէջ բանտարկութեան դատապարտուածներէն ամէն մէկուն, թէ ինչու հոս կը գտնուին, և ինձի պէս պիտի ըսեն թէ պատճառը մանկութեան տարիներու մէջ իրենց խղճին խտացած և խանձուած ըլլալն է:»


Մարդկային սրտին նման այսպիսի զգայուն բանի մը վրայ մնայուն տպաւորութիւն մը թողլու համար բաւական է շատ թեթեւ ազդեցութիւն մը: Փոքրիկ թռչունը, որ անհայտելի դարեր առաջ գետեզերքի կակուղ շաղախին վրայ կը քալէր, թողած է հետք մը որ այսօր կը տեսնուի կարծրացած քարին վրայ: Պտերին (այնքէն սին) փափուկ տերեւը որ տարիներ առաջ իր ցօղունին վրայէն ինկաւ՝ ճեղքուած հերձաքարերուն և քարացած հանքածուխներուն մէջ, այսօր կը ցուցնէ իր հետքերը իր բոլոր ուսկանաձև երակներով: Այսպէս է մանկութեան օրերու սիրտն ալ. երբ կ'ընդունի տպաւորութիւն մը, թէպէտ շատ փափուկ, անոր հետքերը կ'ըլ-

լան մնայուն բարութիւն կամ չարութիւն: Կանուխ ժամանակուան փորձութիւնները, երբ անյաղթելի կը կը մնան, յաւիտեանական հետքեր և նշաններ կը թողուն մարդուս նկարագրին վրայ այնպէս խոր և անջնջելի, ինչպէս փոքրիկ թռչունին թաթերուն հետքերը՝ ժայռին վրայ:



ԹԻՊԵՑՑԻ ԱՂՁԻԿ ՄԸ

Շատ բան չենք գիտեր Ասիոյ կեդրոնը գտնուած այն երկրին վրայ որ թիպեթ կը կոչուի, ոչ ալ անոր բնակիչներուն, թիպեթցիներուն, վրայ: Անգղիացի տիկին մը, Իզապէլլա Պիլլի, ճամբորդած է այդ երկրին մէջ, և անոր և անոր բնակիչներուն վրայ գիրք մը գրած է որուն մէջէն կ'առնենք թիպեթցի աղջկան մը այս պատկերը:



ԵՐԿՈՒԻ ՓԱԽՉՈՂՆԵՐ

Բոյնի մը մէջ սկիւռի չորս ձագեր կային: Անոնցմէ մէկը, երբ իրենց ծնողները բոյնէն հեռացան ընտանիքին կերակուր ճարելու համար, անմիջապէս ըսաւ միւսներուն, «Ես բաւական մեծցած եմ, և հիմա կրնամ ինքզինքս հոգալ» և դուրս ելաւ բոյնէն:

Անկէ ժամ մը առաջ Արշամ, հակառակ իր ծնողաց հրամանին, առանձին իրենց ամարանոցին վրանէն դուրս ելած էր, հետը ձող մը, կարթ մը և լար մը առնելով, և գացած էր ցուրտ և սրընթաց գետի մը եզերք ձուկ բռնելու համար: Հետ առած էր նաև տուփ մը, մէջը խայծ (դուրս եկէ) գրած, և այնպէս պատահեցաւ որ փոք-

րիկ սկիւռը՝ բոյնէն դուրս ելելէն քիչ ետքը Արշամի լարին ծայրը կըցուած տեսաւ փոքրիկ կապոյտ և կարմիր բան մը որ ողորկ ժայռին վրայ կը թառայէր: Վասն զի Արշամ ձուկ բռնելէ ձանձրացած՝ հիմա իր լարին հետ կը խաղար:

«Ահա դուարճալի բան մը» ըսաւ սկիւռին ձագը ինքնիրեն, և սկսաւ խաղալ անոր հետ ինչպէս կատուի ձագ մը կը խաղայ մանածի կծիկի մը հետ: Արշամի համար այս բանը ձուկ բռնելէն շատ մը աւելի լաւ դրօսանք մըն էր: Այնչափ բարձրաձայն խնդաց սկիւռին խաղերուն համար՝ որ անտառները արձագանգ կու տային: Բայց մինչ լարը կը ճօճէր, կարթը փոքրիկ սկիւռին կուշտէն մորթին մէջ մտաւ, և Արշամ կարթով ձուկ քաշածի պէս ցամաք քաշեց զայն:

«Ո՛հ, ի՛նչ աղէկ բան պիտի ըլլայ եթէ տուն տանիմ», ըսաւ Արշամ և, տուփին մէջէն խայծերը պարպելով և մէջը օդ բանելու համար կափարիչին վրայ ալ ծակ մը բանալով, փոքրիկ սկիւռը հոն դրաւ, զգուշութեամբ անոր մտին մէջէն հանեց կարթը, թէպէտ այսպէս ըրած ժամանակը սկիւռը կը ճուար վախէն և ցաւէն. և բոլոր ատենը որ տուփին մէջ դրուած Արշամի բնակարանը կը տարուէր, կ'ըսէր ինքնիրեն, «Երանի՛ թէ այս առաւօտ ես իմ գլխուս գործի չեթալի»:

Գալով Արշամի, սկիւռին միւր մըտնող նոյն կարթը կերպով մը իր բթամատին մտտ տեղը մտաւ. և ինք չկրցաւ անկէ հանել թէպէտ շատ աշխատեցաւ: Ուստի բոլորովին երջանիկ չէր: Կը խորհէր ինքնիրեն, «Երանի՛ թէ անհնազանդ եղած չըլլայի մօրս, և ճամբայ ելաւ տուն երթալու. բայց բլուրին միւս կողմէն իջնել սկսաւ, և մինչ մայր սկիւռը իր բերնով բերած մարացորենը կը բաժնէր երեք ձագերուն՝ փոխանակ չորս ձագերու բաժնելու, անդին Արշամի մայրը և իր դրացիները իրենց վրաններէն և խրճիթներէն ելած՝ կը պտրտէին մերձակայ բլուրներուն վրայ և խորունկ, վտանգաւոր հեղեղաաններուն մէջ «Արշամ, Արշամ» աղաղակելով, և պատասխան չընդունելով բայց միայն իրենց աղաղակներուն արձագանգները:

Մինչև որ գտան, գիշեր եղաւ: Արշամ գտնուեցաւ գետակի մը եզերքը պառկած և քնացած, իր կարթին ձողը ծայրին մօտէն կտորուած, լարը զոր կարող եղած չէր քակել կար-

Թէն, ուսած ալ ձեռքին փաթթուած էր, կոշիկները մաշած, հանդերձները դէշ կերպով պատուած էին, բայց ինքը տակաւին բռնած էր սուփը, որուն մէջ խեղճ, անօթի սկիւռը ի զօր պատերը կը ճանկութէր դուրս ելլելու համար:

Սկիւռին ձագը երբեք չդարձաւ իր ծնողներուն, և Արշամ ըսաւ թէ մէյ մըն ալ պիտի չլիտիջի: Խոստում մը՝ զոր իր ցաւած ձեռքը միտք պահել տուաւ մինչև որ ինք իր սկիւռին հետ ամարանոցէն քաղաք դարձաւ:

ՎԱԽՅԱԻ ՆՈՅՆ ԽՕՍԳԵՐԸ ԲԵՐՆԵՆ շԱՆՆԼՈՒ

Երգնու և հայհոյել իրենց ունակութիւն ընտանեացի չեն կրնար իրենք իրենք արդարացնել, ըսելով թէ անոնց նշանակութեան վրայ չեն խորհիր երբ կը հանեն իրենց բերաններէն: Այդ պիտիները անով ու դողով պիտի լեցուին եթէ յանկարծ դէմ առ դէմ գտնուին Աստուծոյ հետ:

Քարոզիչ մը, երբ անգամ մը լսեց որ դորձաւոր մը տակալի երգումներ և հայհոյութիւններ կը հանէր բերնէն իր ընկերներուն առջև, ըսաւ անոր թէ «Գու՛ն վախկոտ ես սակայն, դիւրին է հոս ընկերներու առջև ընել այդպէս, բայց ո՛չ երբ առանձնութեան մէջ կը գտնուիս:» Մարդը պատասխանեց թէ իրեն համար տարբերութիւն մը չէր ընել բազմութեան կամ առանձնութեան մէջ գտնուիլը, ոչ ալ ժամանակը կամ տեղը:

«Քեզի ոսկի մը կու տամ, եթէ կէս գիշերին երթաս գերեզմանատուն և, երբ Աստուծոյ հետ մինակ կը գըտնուիս հոն, ըսես նոյն չար խօսքերը,» ըսաւ քարոզիչը:

«Շատ աղէկ, ալ ի՛նչ կ'ուզեմ եթէ այդպէս դիւրին կերպով ոսկի մը չահիմ,» պատասխանեց մարդը: «Վաւ, ուրեմն վաղ առտու ինձի եկուր և իմացուր թէ ըսուածին պէս ըրած ես,» ըսաւ քարոզիչը:

Կէս գիշերը հասաւ. մարդը գերեզմանատուն գնաց: Շատ մութ գիշեր մըն էր: Երբ մարդը գերեզմանատունէն ներս մտաւ, ձայն ձուն չկար. մեռեալ լուսութիւն մը կը թագաւորէր: Այն ատեն քարոզչին «Աստուծոյ հետ մինակ» բառերը անոր միտքը եկան զարմանալի ազդեցութեամբ: Իր ամբարշտութիւն ըրած ըլլալը և նոյնը նորէն կրկնելու յանդերձութիւնը կայծակի պէս միտքը գալով, դողաց իր յիմարութեանը վրայ և ուրիշ բան կարող չեղաւ ընել:

բայց եթէ՝ ծունկերուն վրայ իյնալ և փոխանակ այն ամբարշտական բառերը բերնէն հանելու՝ սրտանց աղաղակել, «Աստուծո, ողորմէ ինձի մեղաւորիս:»

Հեռուեալ օրը քարոզչին գնաց, շնորհակալ եղաւ անկէ իր առաջարկած փորձին համար, և որոշեց որ այնուհետև ա՛լ այնպիսի չար և յիմարական խօսքեր չհանէ բերնէն:

ԱՐԻԱՍԻՐՏ ԳՈՅՐԸ

«Միշտ ըրէ այն բանը զոր կը վախնաս ընել,» ըսաւ անգամ մը իմաստուն մարդ մը իր աղուն:

Քաջութեան շատ տեսակները կան: Համբերութեան քաջութիւնն է որ ընդհանրապէս կը պահանջուի կիներէն և որուն մէջ անոնք յաճախ կը գերազանցեն: Քաջութիւնը կուռիլ և ուրիշներն սպաննել չնշանակիր միշտ: Քանի մը տարիներ առաջ Փարիզի փողոցներուն մէջ կուռ մը պատահեցաւ: Ժողովուրդը գետնի սալայատակները քակելով պատնէշներ շինեց անոնց քարերէն, իր առջև ելած կառքերը և սայլերը խորտակելով բլուրներու պէս դիզեց ճամբաներուն վրայ իբրև պատնէշներ թշնամիներուն դէմ: Երկու հակառակորդ կողմերէն շատեր պայծառեցան կամ վիրաւորուեցան: Բայց կային քանի մը բարի կիներ, Գթութեան Քոյրեր կոչուած, որոնք չվախեցան պատնէշներուն մօտենալ, և եթէ տեսնէին սաստիկ վիրաւորուած մէկը, մէկ կողմ կ'առաջնորդէին կամ կը տանէին և կը ջանային բուժել անոր վէրքերը: Մարդ մը պատնէշին գազաթէն վար գլորեցաւ, վասն զի ջարհուեցաւ իր երկու սրունքներէն, այնպէս որ անկարող էր շարժելու: Ուրիշ մարդ մը, որ թշնամի կուռակցութենէն էր, տեսնելով որ նա տակաւին ողջ էր, վեր առաւ իր հրացանին սուլինը խոցելու և սպաննելու համար զանկաւ որ իր առջև պառկած կը կենար: Յանկարծ զգաց որ մէկը բռնեց իր բազուկէն, և երբ բարկութեամբ չորս կողմ կը նայէր թէ ո՛վ էր, տեսաւ որ Գթութեան Քոյրերէն մէկն էր որ իր քովը կը կայնէր թռչող գնտակներուն և չողացող սուրբրուն մէջտեղը: «Կեցիր,» աղաղակեց կինը հրամայական ոճով մը, «անոր չդպչին, ինձի վերաբերեալներէն է, վիրաւորուած է, և բոլոր վիրաւորուածները իմն են:» Մարդը զարմացաւ կնոջ այս քաջութեանը վրայ:

զէնքը վար ձգեց ձեռքէն, և արիւսիրտ կինը պատնէշին քովէն մէկ կողմ տարաւ այն վիրաւորեալը, և այսպէս ազատեց անոր կեանքը իր կեանքը վտանգի մէջ դնելով:

ՓՈՒՍԱԴԱՐՁ ՍԵՐ

Փոքրիկ Նուարդ իր պուպրիկին հետ կը խաղար մինչ մայրը գիր կը գրէր: Երբ մայրը գիրը ընցուց, «Եկուր գրելու», ըսաւ Նուարդի: «Ո՛հ, որչափ ուրախ եմ. ես քեզ շատ սիրելու եմ, մայրիկ,» պատասխանեց Նուարդ: «Ի՛րա՛ւ, սիրելիս,» և զանկալ գուրգուրանքով սեղմեց իր կուրծքին վրայ, «չատ ուրախ եմ որ իմ փոքրիկ աղջիկս զիս այնչափ կը սիրէ: Բայց կարծեմ այնչափ առանձին չգրացիր ինքզինքդ երբ գիր կը գրէի: Դուն և պուպրիկը երջանիկ ժամանակ անցուցիք մէկտեղ, այնպէս չէ:» «Այո, մայրիկ, բայց ատենէ մը ետքը ձանձրացայ սիրելիք:» «Ինչո՞ւ,» հարցուց մայրը: «Ո՛հ, անոր համար որ ան զիս փոխարէն չսիրեր:» «Եւ ա՛յդ է պատճառը որ զիս կը սիրես:» «Պատճառին մէկը ատ է, բայց ոչ թէ առաջին պատճառը, ոչ ալ լաւագոյն պատճառը:» «Ուրեմն ո՛րն է առաջին և լաւագոյն պատճառը:» «Չե՛ս կուսհեր, մայրիկ,» ըսաւ փոքրիկ աղջիկը, իր կապոյտ և պայծառացած աչքերը անկելով. «անոր համար որ դուն զիս սիրեցիր երբ ես այնչափ փոքր էի որ չէի կրնար փոխարէնը սիրել քեզ. այս է պատճառը որ քեզ շատ կը սիրեմ:»

Շատ աղէկ պատճառ մըն էր ասիկա. և մինչև անգամ մայրիկն ալ չէր կրնար անկէ աւելի աղէկ պատճառ մը տալ: Այդ է նաև պատճառ մը թէ մե՛ք ինչո՛ւ սիրելու ենք Յիսուս Քրիստոսը. «Ինչու որ առաջ անիկա մեզ սիրեց,» և մեռաւ մեզ փրկելու համար մեր մեղքերէն:

ՇԱՆՆԼՈՒԿ ՍՈՒՐԻ ԳԻՐՔԵՆ

ՍՈՂՈՄՈՆԻ ՄԵԿ ԱՌԱԿԸ

Որ կը բազկանայ եօթանասունութ տարեք

38 1 45 30 54 61 14 12 71 19 7 74 Քողովոցք որ սպրեք: 10 37 9 13 20 5 59 42 36 11 15 օրնու թիւնովը քաղաքը կը բարձրանայ:

34 17 62 60 19 50 4 65 Լուրերը անոյլ են: 22 44 57 47 53 52 32 69 26 64 հոյը անձրևը կը սրուի: 41 25 46 31 86 29 63 24 2 68 78 օճի բարձրան: 75 67 9 76 23 11 ժամանակ կ'ալ: 70 3 49 37 20 21 Արդարք: 16 77 38 36 14 55 35 2 մարդ: 27 73 48 17 52 39 մեղ միտք: 40 4 72 58 28 զրէք անոր



Ամերիկայի Միտինարա Արտոնատէր Տնօրէն—Սրբազան Գրքարար Յինճանճըլար Եղբւր—Ս. Ամերիկայի Իսթ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ Ի ՏՅԱՐԱՆԻ Ա. ՅԱՌՈՐ ԳՈՅԱՅԱՆ